# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 1

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ.-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու 2019թ.-ի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը.

- <<ՄԽՉՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ <<ՄԽՉՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ.Խ ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2019Թ.-Ի ՀԱՄԱՐ /ԶԵԿ.Ն.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/
- ՄԽՉՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2019Թ.-Ի ՀԱՄԱՐ /ԶԵԿ.Խ.ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2019Թ.-Ի ՀԱՄԱՐ/ԶԵԿ.Ն.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/
- ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ.Խ.ՊՈՂՈՍՅԱՆ/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 2

## <<ՄԽՉՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ <<ՄԽՉՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 15 կետի պահանջներով և հիմք ընդունելով Մխչյան համայնքի ղեկավարի՝ 27.12.2018թ.-ի թիվ 78 որոշումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հիմնադրել <<Մխչյանի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը

2. Հաստատել <<Մխչյանի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը /հավելված/

| Կողմ -2 | Դեմ -5 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ | ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | |
| ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ | ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ | |
| | ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ | |
| | ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ | |
| | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ | |

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՉԷ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 3

### ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2019Թ.-Ի ՀԱՄԱՐ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 18 հոդվածի 11 կետի պահանջներով

Հաստատել Արարատի մարզի Մխչյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը 300000/ երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

"04200512"

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 4

ՄԽՉՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2019Թ.-Ի ՀԱՄԱՐ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 28 կետերի պահանջով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մխչյանի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը 2019թ.-ի համար համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 , Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

*04200512*

հավելված

Մխչյան համայնքի ավագանու

2019 թվականի հունվարի 18 -ի N 4 որոշման

МԽՉՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2019թ.-Ի ՀԱՄԱՐ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 64

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Աշխատողների քանակը 10

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| | | |
| | | |
| | | |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 160000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ /2.3-2/ | 2 | 150000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ /3.1-2/ | 2 | 145000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-2/ | 1 | 140000 |
| | | |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| | | |
| Տնտեսվար-վարորդ | 1 | 90000 |
| Պահակ - հավաքարար | 1 | 72751 |
| Օպերատոր | 1 | 90000 |
| | | |
| | | |
| | | |

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

/Համայնքային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերն ըստ հերթականության, այդ թվում՝ համայնքապետարանի պայմանագրային աշխատողների

Աշխատողների քանակը 3

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցներ | | |
| Հարկահավաք-գրիչ | 1 | Ըստ պայմանագրի |
| Գերեզմանոցի պահակ | 2 | 72751 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

աշխատողների քանակը 25

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 140000 |
| Մանկապարտեզի մեթոդ.մանկ. | 1 | 119200 |
| Դաստիարակ | 4,58 | 119200 |
| Երաժ. դաստիարակ | 0.75 | 119200 |
| Պարուսույց | 0.75 | 119200 |
| Ֆիզ. դաստիարակ | 0,75 | 119200 |
| Դաստիարակի օգնական | 3,7 | 77904 |
| Խոհարար | 1 | 77904 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 77904 |
| Բուժ. քույր | 0.75 | 77904 |
| Հավաքարար | 0.5 | 77904 |
| օժանդակ բանվոր | 0.5 | 77904 |
| Հաշվապահ | 1 | 77904 |
| Տնտեսվար | 1 | 72751 |
| Գործավար | 1 | 77904 |
| Դռնապան | 1 | 77904 |
| Պահակ | 1 | 72751 |
| Հնոցապան | 0.5 | 77904 |
| | | |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

*Աշխատողների քանակը 4*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մշակույթի տան կազմակերպիչ | 1 | 100000 |
| Գրադարանավար | 1 | 77904 |
| Պահակ | 1 | 72751 |
| Հավաքարար | 1 | 72751 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

աշխատողների քանակը 22

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 110000 |
| Բաժնի վարիչ | 1 | 72751 |
| Հաշվապահ | 1 | 77904 |
| Ցերեկային պահակ | 1 | 72751 |
| Հավաքարար պահակ | 1 | 77904 |
| Գործավար | 1 | 77904 |
| Մանկավարժներ | 10.7 | 77904 |
| Մանկավարժներ | 5 | 72751 |
| Մանկավարժներ | 2 | 120000 |
| | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Ե. Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 5

### ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2019Թ.-Ի ՀԱՄԱՐ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 18,19 և 20 կետերի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մխչյան համայնքի 2019թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված

# ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ.-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ --- 15000 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ --------- 30000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ------- 50000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ------- 50000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ -------- 100 000 դրամ.

գ.ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ---- ---- 3000 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ -- ---- 5000 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ --- ---- 3000 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

- 1-ին,2-րդ,3-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -------------- 5000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------------- 10500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------------- 13500 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --- 20500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --- 25500 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------------------- 45500 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -------------- 5000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝-------------- 10500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------------- 135800 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ---- 20500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝----- 25500 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------------------- 45500 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև ------------ 3330 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ---------- 5100 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ---------- 10100 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝------- 15100 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ------- 20100 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ------------------ 30100 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ --------- 500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ --------- 1100 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ --------- 2100 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ---------- 4100 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ----------- 8100 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ----------------------- 15100 դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

- 5-րդ,7-րդ,10-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկել 0.3 գործակցի կիրառմամբ

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնքի 2019 թվականի տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /հազար /դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերին շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը,վերականգնումը,ուժեղացումը,արդիականացումը,ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներին աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /հազար/ դրամ

6) Մխչյան համայնքի վարչական տարածքում աղբահանության դրույքաչափերը սահմանել՝

6).1 Համայնքապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 /հարյուր/ դրամ:
6).2 Շինարարական,գյուղատնտեսական և խոշոր եզրաչափի աղբի համար

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման համար՝ 1000 /հազար/ դրամ:

բ/ մեկ խորանարդ մետր աղբի տեղափոխման համար՝ 500/հինգ հարյուր/ դրամ:

գ/ Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար՝ ամսվա համար 1 քառ. մետրի համար 10 /տաս/դրամ:

դ/ Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայությունների համար յուրաքանչյուր ամսվա համար 1 քառ. մետրի համար 15 /տասնհինգ/ դրամ:

ե/ Արտադրական ,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար յուրաքանչյուր ամսվա համար 1 քառ. մետրի համար 3 /երեք/ դրամ:

զ/ Կրթական,մշակույթային ,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինությունների համար յուրաքանչյուր ամսվա համար 1 քառ. մետրի համար 1/մեկ/ դրամ:

7) Համայնքային ենթակայության մանկապարտեզների , արտադպրոցական դաստիարակության հաստատությունների /երաժշտական,նկարչական և արվեստի դպրոցներ/ ծառայություններից օգտվող բնակչության փոխհատուցման վճար.

7).1 Մխչյանի երաժշտական դպրոցի համար՝

ա/ դաշնամուր – ամսեկան 4000 /չորս հազա/ դրամ

բ/ ջութակ – ամսեկան 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ

գ/ դհոլ – ամսեկան 5000 /հինգ հազար/ դրամ

դ/ կիթառ –ամսեկան 5000 /հինգ հազար/ դրամ

ե / ժողովրդական նվագարաններ պետական սահմանված քանակից ավելի դեպքում ամսեկան – 3000 /երեք հազար/ դրամ

7).2 Մխչյանի մանկապարտեզի համար՝

ա/ ընտանիքից 1 երեխա հաճախելու դեպքում –ամսեկան 5000 /հինգ հազար/ դրամ

բ/ ընտանիքից 1-ից ավել երեխա հաճախելու դեպքում -4000 /չորս հազար/ դրամ

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ 1000 /հազար/ դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ե. Թադևոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 6

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Վարդանյանի համապատասխան դիմումը

1. Քաղաքացի Արման Վարդանյանին ուղղակի վաճառքի եղանակով օտարել Մխչյան համայնքի վարչական տարածքում գտնվող, 03-059-0107-0031 կադաստրային ծածկագիրը կրող, բնակավայրերի ՝ բնակելի կառուցապատման՝ 0.01765 հա մակերեսով հողամասը:

2. Վաճառքի գինը կազմում է 0.01765x1242=219213 /ըստ կադաստրային արժեքի/ ավելացրած մինչև պետական գրանցումը համայնքի կողմից կատարված ծախսերը՝ 25000

ընդամենը՝ 244213 /ՀՀ դրամ/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ